



ՀԱՅԻԿ

ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ Ե՛ ԳՐ. ԹԱՐԻՍՅԱՆ

ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ Ե՛ ԳՐ. ԹԱՐԻՍՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ՝ ԵՄ. ԳՐԻԿ, ԱՆ. ՄԵՆԵՐ, ԳՐԻԿ, ԱՆՈՆԻ,
ՍՈՒՐԻԿ, ՏՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ,
ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ,
ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ, ՍՈՒՐԻԿ,

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Ծաղիկ» եւ իմ եւս «Ծաղիկ» չպիտի մանցնամ:
Իմ տնուս պարագ սեղ զարուհակ բերանսի պիտի տունէ:
Իմ փարսս կտնայիկ պիտի դրկէ:
Ամէն մարդ պիտի է յարգէ եւ գլխուն վրայ նստեցնէ զիս:
Ո՛հ ո՛հ պիտի է աչք ընեմ իմ փարսիս, բո՛ղ աչք ունեցողին աօքը
կլայ:
Պէտք է իմ փարսս ձեռ կոկորդը տնցնէ:
Պէտք է նեղանամ, երբ ձեռ դրկած յօղումները չսպաւին:
Պէտք է ձայն ազգամ չնսնկէ եւ գլխուն վրայ դնէ, երբ ձեռ
դժգոյնի այս սիրականներուն մեջ:
Երբ օտո բարկանամ, պիտի է մեղանցէ:
Եւ երբ մեղանցելու մօտ ըլլամ, պիտի է... քաջախ խմէ:
Թիի 75 Տնօրէն Ռ. Սաղաեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գալատիոս խան թիւ 7

ՌԻՐԵԱԹ 14 ՅՆՎ. 1909 ۞ غلطة قورشونى خاندە نومرو ۞

ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՊԱԳԱՆ

ԵՆԹԵՐԱԽՈՒ

Բ Ի Զ Ա Ն Դ Ք Է Զ Ե Ա Ն Ի Հ Ե Տ

Անշուշտ կը փափաքէք հասկնալ
Հայ ազգին ապագան:

Ասիկա ամէն Հայու առաջին եւ
վերջին զգացումը պէտք է որ ըլ-
լայ:

Գիտենք որ Հայ ազգին անցեալը
շատ գէշ է, ներկան ալ նոյնպէս, եւ
պիտի ուղէինք հասկնալ որ ի՞նչ
պիտի ըլլայ ապագան այս Ազգին,
որ թէեւ մօտ 6000 տարուան հնու-
թիւն մը ունի, բայց նորէն ասոր
համար Պիթ Պաղարի մէջ գտնուած
ասորանքի մը չափ ալ արժէք
չունի:

Բայց, ո՛ւրիշ կարելի է հասկնալ
այս ապագան, որ մութ է ա՛յնչափ
որչափ... Կովկասահայ ոճով գրը-
ռածք մը:

Ո՛վ կրնայ գուշակել Հայ ազգին
ապագան:

Տիկին Թէ՛պը:

Ան Բարիլի վաղուան օրը իսկ չի
կրնար կոր դուշակել, ո՛ւր մնաց Հայ
ազգին ապագան, որուն մասին
«խապար» իսկ չէ:

Հապա ո՛վ:

Թէ՛վէ կարգացողը թէ փակիւ
նետողը...:

Երկուքին ալ ուսելիք ապուր չէ
աս:

Ու միտքս եկաւ Բ. Քէչեանը,
Բիւզանդ. Քէչեանը, մե՛ծն Բիւզանդ.
Քէչեանը, որուն միտքը ա՛յնչափ
մեծ է որչափ... Բիւզանդեան Կայս-
րութիւնը եւ որուն հոգին ա՛յնչափ
լայն է... որչափ «Բիւզանդիոն» օրա-
թերթին էջերը:

Հայ ազգին ապագան Բիւզանդ.
Քէչեանէ զատ ո՛վ կրնայ գու-
շակել:

«Բիւզանդիոն»ի ապարանին դրան
տնջեւ հասնելու՝ արդէն չունչս
կտրուած էր եւ զնչուի փքոցի մը
նման կը հեւայի:

Դրան առջեւ հանդիպեցայ երի-
տասարդի մը որ թերթ կը ծալէր:

Բիւզանդ. Քէչեանը... հար-
ցուցի:

Հայրիկս է, պատասխանեց՝
հարատւ թեան հսկայ շեշտով մը:

Շնորհաւորութիւններս, պա-
տասխանեցի՝ այս անակնկալ պա-
տասխանէն շուարած. շատ երջանիկ
էք այս տեսակ հօրը դաւակը ըլլալ-
նուդ համար: Բայց ձեր հայրը...

— Վերն է, ըսաւ՝ միշտ իր թեր-
թերը ծալելով:

Սանդուխտի գլուխը հանդիպեցայ
գիրուկ եւ կլորիկ դէմքով ու մարմ-
նով երիտասարդի մը, որ տակառի
մը պէս սանդուխտներէն վար կը
գլտորէր:

— Բիւզանդ. Քէչեանը... հար-
ցուցի:

— Հայրիկս է, պատասխանեց
խնդալով:

— Ա՛ս ալ, մոմտացի: Յետոյ
բարձրաձայն:

— Պարո՛ն, ո՛րչափ երջանիկ էք
այս տեսակ հայր մը ունենալնուդ
համար: Փա՛ւք տուէք երկի՛քի որ
ձեզի այս տեսակ հօր մը զաւակը
չինքն է:

Պարոնը շիկնեցաւ եւ պտտա-
խանեց:

— Այո՛, երանի մեզի որ այս տե-
սակ հայր մը ունինք:

— Երանի՛, կրկնեցի ու շարու-
նակեցի սանդուխտներէն նորէն վեր
ելլել:

Դանի մը աստիճան աւելի վեր
դէմս ելաւ կարմիր այտերով օրիորդ
մը, դպրոցականի պրոսպեկտով:

— Բիւզանդ. Քէչեանը, հար-
ցուցի:

— Հայրիկս է, պատասխանեց
օրիորդը՝ գլուխը խոնարհեցնելով:

— Կը շնորհաւորեմ, կրկնեցի եր-
րորդ անգամ ըլլալով, որ Աստուած
ձեզի այսպիսի հայր մը շնոր-
հեո է...:

Աստիճան վը աւելի վեր ուրիշ
օրիորդի մը հանդիպեցայ, աս ալ
կարմիր այտերով:

— Բիւզանդ. Քէչեանը...:

— Հայրիկս է պատասխանեց
օրիորդը:

Օ՛հ օ՛հ օ՛հ օ՛հ, աս ի՞նչ սարսափելի

բան էր:
Արդեօք Բիւզանդ. Քէչեան մե-
ծանուն ազգայինը՝ սօյո՛վ ու սօփօ՛վ
սիմսիթիով այս տպարանը կը
բնակէր:

Եւ մանաւանդ ի՞նչ սիլսիլէ, ի՞նչ
նահապետական սիլսիլէ:

Աս ի՞նչ նահապետական ընտա-
նիք...:

— Ապա՛նուբար, մոմտացի, Բ.
Քէչեան Զոլայի Fécondité կար-
դացած է, անոր համար այսչափ տու-
ղինաներով զաւակ է չինքն:

Բայց, յետոյ միտքս եկաւ որ Բ.
Քէչեան իր զաւակներու տուղինան
լրացուցած էր արդէն, երբ Զոլա իր
Բեղմնաւորութիւնը գրեց:

— Ահա, ըսի ես ինձի, ճշմարիտ
Աստուածաշնչական մարդը որ եր-
կիրը լեցնելու աշխատեք է. եթէ
Հայ ազգին մէջ տասը հազար հատ
Բիւզանդ. Քէչեան ունենայինք, Հայ
ազգը այսօր Ռուսիոյ չափ բազմա-
մարդ պիտի ըլլար: Բայց, աղէկ որ
ասանկ չէ եղեր, որովհետեւ այն ա-
տեն շատ աւելի բազմաթիւ պիտի
ըլլայինք անշուշտ եւ բոլորովին իրար
պիտի ուտէինք:

Սակայն, ամէն պարագայի մէջ,
Բիւզանդ. Քէչեան գիտէ եղեր թէ
օրին մէկը ո՛րչափ պիտի հարստանա-
նայ եւ այդ պատճառաւ Բիւզանդ.
Քէչեան Հարստութիւնը հիմներ է
Ոստիւղի մէջ:

Ինքզինքս դտայ սենեակի մը
առջեւ, որուն վրայ գրուած էր. —
Ահա մենք արգիլուած եւ:

Հակառակ այս արգելքին, ես
նեքս մտայ:

Ասոր համար զինուորական ատենի
առջեւ չպիտի հանէին ա՛ զիս:

Գրասեղանի մը առջեւ դեղին
ֆէջի մօրուքով երիտասարդ մը կ'աշ
խատէր:

— Բիւզանդ. Քէչեանը, հարցուցի:

— Հայրիկս է...:

Ահա՛ն ա՛ն ա՛ն ա՛ն ա՛ն...
Զարմանքէս եւ ապուրթեմէս
թեքս գետին ինկան, նստեցայ եւ
թեքս ժողվեցի, տեղերնին դրի եւ
մտածեցի:

— Այս ի՞նչ սարսափելի բան է
այս տպարանին մէջ չհանդիպեցայ
դեռ մէկու մը որ Քէչեանի համար
չըսեր. — Իմ հայրիկս է:

Արդեօք Բիւզանդ. Քէչեանն ալ
«Հայրիկ» կ'անուանէին, ինչպէս
«Հայրիկ» կ'անուանեն Ուրիմանը,
Իդրիք մը...:

— Բայց չէ ըսի, եթէ Բիւզանդ.
Քէչեան հայրիկ ըլլար այդ իմաստով
զայն ալ էջմիածնի կաթողիկոս կը
ինէին, որովհետեւ աշխարհիս բոլոր
հայրիկները նշանակուած են էջմիա-
ծնի կաթողիկոսը ըլլալու:

— Արդեօք հարցուցի քէչի-մօրու-
քով երիտասարդին, կրնա՞մ ձեր հայ-
րիկը տեսնել:

— Ներան է:

Փա՛ւք Աստուծոյ, քանի որ
«ներան էր». ըսել է որ ալ «վերը
չէր»:

Գոհունակութեան «օ՛հ» մը ար-
ձակեցի:

— Կրնաք տեսնել:

Բեջի-մօրուքով երիտասարդը
որ ուրիշ մէկը չէր բայց եթէ Պարոյր
Քէչեանը — սկսաւ մտածել. մտածեց
հինգ վայրկեան, տասը, քսան, ե-
րեսուն, քառասուն վայրկեան...:

Ես միշտ դիմացը օտքի վրայ
կը կայնէի:

— Արդեօք չե՞մ կրնար տեսնել:
Ասոր վրայ Պարոյր Քէչեան սկսաւ

մտածել հինգ վարկեան, տասը, քըսան, երեսուն, քառասուն...

Եւ ես միշտ դիմացը ոտքի վրայ կը սպասէի:

Վերջապէս հաճեցաւ հորցնել:

— Բաժանորդ էք:

— Ո՛չ ըսի:

— Պիտի գրուի՞ք:

— Նոյնպէս ոչ:

— Գործակալ էք:

— Ո՛չ:

— Աշխատակից:

— Ո՛չ:

— Փարա՞ բերիք:

— Ո՛չ:

— Հապա, հորցուց յայտնի կերպով զարմացած, ի՞նչ էք, բաժանորդ չէք, բաժանորդ չպիտի գրուիք, գործակալ չէք, աշխատակից չէք, փարա ալ չէք բերեր, հապա ի՞նչ էք, ո՞վ էք, ինչո՞ւ եկաք...

— Ձեր մեծայարգ և մեծատաղանդ հայրիկին հետ տեսնուելու համար եկայ:

Յուստիապետութեան մեծ արտայայտութիւն մը առաւ Պարոյրին դէմքը. կարծէք Ղալաթիոյ աշտարակին էն բարձր յարկէն վար էր տապալած:

— Ուրեմն, նստեցէք, ըսաւ առանց աթոռ մը ցոյց տալու, քանի որ արդէն խմբագրատան մէջ աւելորդ աթոռ չկար:

Բնականաբար ես ալ ոտքի վրայ կեցայ:

Նստեցէք, հրաւիրեց կրկին Պարոյր Քէչեան:

Չորս դիւ նայեցայ գտնելու հաւար անտեսանելի աթոռները, և դարձաւ ոտքի վրայ մնացի, որովհետեւ աթոռ չէի տեսներ, ո՛չ տեսանելի, ո՛չ ալ անտեսանելի:

Նստեցէք, երեքնեց Պարոյր՝ որուն ապահովաբար արգելք կ'ըլլայի գրելուն՝ ոտքի վրայ կենալուս պատճառաւ իր գլխուն վերեւ:

Նստի՛մ, բայց ո՛ւր, հարցուցի ճարահատ:

«Պարոյր չորս դիւ նայեցաւ՝ տեսաւ որ աւելորդ աթոռ չկար, ինքն իրեանք իրաւունք տուաւ ինծի, ա՛լ ձայնը չհանեց և սկսաւ գործը շարունակել:

Մինչ ես մնացի ոտքի վրայ կենալու զատապարտաւած բոլորովին:

Ու այս միջոցին դիտեցի որ Բիւզանդիոնի խմբագրատունը ասանկոտ մըն ալ ունի, — ճաշարանի ասանկոտի նման բան մը, որուն վրայ գրուելով՝ վեր կ'ելլեն ու վար կ'իջնեն... Կերակուրները, ո՛չ, ալ բիւզանդեան կնիքը կրող ձեռագիրները:

Ոտաւորապէս ժամ մը սպասեցի կարծեմ՝ բացարձակ antichambre ընելով, և ինչպէս ամէն antichambre ընող՝ հազար և մէկ հայհոյանք մէկ փարայի ընելով:

Այս Բիւզանդ Քէչեանը վարչապետն էր թէ թագաւոր մը, որուն հետ խօսելու համար պէտք էր նախապէս ժամերով սպասել:

Ապահովաբար եթէ Բեամիլ փաշան տեսնուելու գացած ըլլայի, մարդը զիս աւելի շուտով կ'ընդունէր:

Վերջապէս պարտք համարեցի ըսել:

— Է՛յ, մինչեւ ե՛րբ...

— Հա՛, ըսին... քանի մը մարտաւոր տնձեր, որովհետեւ Բիւզանդիոնի խմբագրատունը ամէն մարդ մարտաւոր է՝ խօսքերին ժողովուրդին խափան խօթելու համար: Անտօրուս մարդոց խօսքը մտիկ չըլլուիր:

Ահա՛ թէ ինչո՞ւ Ծաղիկի բոլոր խօսքերը ժողովուրդի ականջին վրէժ կուզան:

Հրամանեցէ՛ք, ըսաւ վերջապէս սեւ-օրուք խմբագիրը. որ Հայոց երկրորդ Բիւզանդ Քէչեանն էր:

Է՛օ՛օ՛օ՛օ՛օ՛օ՛օ՛, վերջապէս...

Որտաւ սկսաւ ուժգին բարբախել, վերջապէս պիտի տեսնէի Բիւզանդ Քէչեանը, մե՛ծ, մե՛ծ, մե՛ծ Բիւզանդ Քէչեանը...

Եւ տեսնակէն ներս մտայ՝ աշնան տերեւի նման դողդաղովով (1000րդ տպագրութիւն):

Սենեակը մերկ էր, մեր նախամօր՝ Եւայի նման մերկ:

Գրասեղանի մը առջեւ նստած էր գիրուկ մարդ մը, գլուխը բաց՝ կատարեալ չիւս լամպա մը. (այս բեգլամին համար Լիւխսի լամպայի ընկերութենէն լամպա մը առինք ձի):

Այս անձը դրամ կը համարէր, — քրիփցները և պակաս կէս-անգլիականները կը դատէր, գրաշարնեւրուն և իր զաւակներուն տալու համար:

Հրամանեցէ՛ք, ըսաւ ձայն մը որ խոր վիրապէն կ'ելլէր:

Բիւզանդ Քէչեանն էր որ կը խօսէր:

— Տէ՛ր, ըսի, ո՞վ մեծատաղանդ տէր, դուք որ Թուրքիոյ Թայիքը կը հրատարակէք, արդեօք կը հաճի՞ք պատասխանել իմ հարցումներուն:

— Իմ ժամանակս ոսկի է, պատասխանեց Քէչեան: Բայց, կը պատասխանեմ, պայմանաւ որ պատասխաններս հրատարակէք և ինծի բեգլամ ընէք:

Գոնթրըպաս մըն էր որ կը խօսէր:

Անչո՛ւշտ, անտարակո՛յս, հարկաւ:

— Ուրեմն խօսեցէ՛ք:

— Տէր, ի՞նչ կը խո՛ջիք մեր Ազգին կաշուածան մասին:

— Կարդացէ՛ք Բիւզանդիոնը և կը հասկնաք:

— Ի՞նչ կը կարծէք որ պէտք էր մեր մեր Ազգը անցեալին մէջ:

— Ես այդ բոլորը գրած եմ Բիւզանդիոնի մէջ. առէ՛ք Բիւզանդիոնը և կը հասկնաք:

— Մեր ազգը արդեօք վերջնականապէս փրկուած է...

— Կարդացէ՛ք Բիւզանդիոնը...

Մե՛ծ, այս մարդը շարունակ Բիւզանդիոնը կարդալ կը յանձնարարէր, փոխանակ խօսքերուս պատասխանելու:

— Ձիւ ապօճէ մը դրեցէք, ըսի դրամը ցնծալով:

Քէչեանի երեսը ճառագայթեց և ըսաւ...

— Շնորհակալ եմ, հիմա խօսեցէք, պատասխանեմ:

Ի՞նչ կը կարծէք որ ըլլայ Հայ Ազգին ապագան:

— Էֆէնտիֆ, Հայ Ազգին ապագան հիշ բան չըլլար:

— Ինչո՞ւ:

— Հայ ազգը փրկելու համար միակ միջոց մը կայ:

— Ո՞րը:

Պէտք է Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրեն զիս:

— Բայց դուք տուգինա մը դաւակ ունիք, կին ունիք:

— Ինչ կ'ըլլայ. ինչպէս Շահրիկ. եան ըսաւ, պատրիարքութիւնը քաղաքական պաշտօն մըն է, արդ ես ալ շատ աղէկ կրնամ Կ. Պոլսոյ պատրիարք ըլլալ:

Թո՛ղ յիտուն ոսկի ամսական տան ինծի, թո՛ղ ես իբր Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքութեան հրատարակեմ, այն ատեն կը տեսնէք որչափ առաջ կ'երթայ Հայ ազգը և... իմ թերթս:

— Ինչի՞ մէջ կը կարծէք որ կայանայ այս յառաջդիմութիւնը:

Հայերը որպէսզի յառաջդիմեն, պէտք է խանութպան ըլլան, նպարտաճառ, մատաճառ, ատաղճառ, մանիֆատուրածի, թղթավաճառ, վերջապէս փրկութիւնը խանութպանութեան մէջ է:

Հապա գրականութիւնը:

Գրականութիւնը ի՞նչ պիտի ընես, մարդ գրականութեամբ անօթի կը մնայ, ես առանց գրականութեան թերթ կը հանեմ և ամէն ամիս հարիւր ոսկի կ'աւելցնեմ:

Գրե՛տի, Բիւզանդ Քէչեան: Եւ ընողները թերթին կը գոցեն:

— Բայց երբ ամէն մարդ խանութպան ըլլայ, հապա ո՞վ պիտի ըլլայ գրագէտը:

— Ես, միայն ե՛ս. գրագէտի ի՞նչ պէտք կայ. պէտք է գրագէտները ինծի պէս ըլլան, որպէս զի ազգը յառաջդիմէ:

— Երուսաղէմի խնդրին մասին ի՞նչ կարծիք ունիք:

— Գե՛շ, շա՛տ գէշ. Դիւնդ վրդ. շատ գէշ մարդ է, Երեցեան ալ... Կեցցէ՛ Յարութիւն Պատրիարք:

— Քանի՞ զաւակ ունիք:

— Աստուծոյ տուածէն՝ հինգ:

— Ինչո՞ւ այսչափ զաւակ ունիք:

— Ես չեմ ունի Լիւթի Ժառանգութիւն մը ընեմ, յետոյ՝ որովհետեւ մարդ մը որչափ շատ զաւակ ունենայ, այնչափ հանգիստ կ'ընէ...

Ամէն բանի մէջ պէտք է դրական ըլլալ:

— Օրմանեանը կը սիրէք:

— Օրմանեանը մեծ մարդ մըն էր:

— Ձեզի շատ դրամ տուած է:

— Աստուած չընէ ես երբէք մարդ պաշտպանելու համար դրամ չեմ առներ:

— Ինչո՞ւ Օսմ. Խորհրդարանին անդամ չեղաք...

Տաղաւարեան եղաւ և դաժ՝ ո՛չ:

Քէչեան գունատեցաւ:

Շրթունքները կախուեցան:

Մարդուն էն փափուկ ջիղին դպած էի:

— Որովհետեւ մեր ազգը ապուշ է, մուտաց Քէչեան:

Գ. Բ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԻՐԳ, ՔԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՝

Ղալաթիոյ կամուրջը ծովուն տակ գացեր է:

Ուղղակի իջուցուեցան ծով՝ Ղալաթիոյ կամուրջը բռնելու և վեր հանելու համար:

Ղալաթիոյ կամուրջը չկար:

Այն ատեն ընդ ծովեայ շոգեհաւներ հանուեցան, որպէս զի փնտռեն Ղալաթիոյ կամուրջը:

Ընդծովեաները ծովու տակէն երթալով կը սուչէին, որպէս զի Ղալաթիոյ կամուրջը իրենց ձայնը իմանալով՝ կենդանութեան լուր մը տար:

Եւ այն իսկ մունետիկներ հանուեցան ծովուն յատակը, որոնք միաձայն կը պոռային:

— Ղալաթիոյ կամուրջ, ո՛ւր ես, Ղալաթիոյ կամուրջ, հո՞ս ես...

Վերջապէս, հեռուէն, խորունկէն ձայն մը լսուեցաւ:

Հո՞ս եմ:

— Մեջտեղ չելլա՞մ:

— Ձեմ կրնար:

— Ինչո՞ւ:

— Հովհեմե կ'աճնամ. մեջտեղ ելլելու երես չունիմ:

✱✱✱ Սալահադինի կուսակցու թիւեր սկսաւ իր ջիւղերը չալել:

Անցեալ իրիկուն երեկոյթ մը ունէին Բերա Բալլափի մէջ, ուր գացած էին զիւանդիտական աշխարհ բոլոր դէմքերը, ի մէջ այլոց...

Կալուօ:

Նոյն իսկ Բեամիլ փաշա եկած էր:

Բիւզանդիոն կ'ընէ թէ ձեռքերը ձերեակ ձեռնոց և կռնակը սթամպուլին կը կրէր:

Բեամիլ փաշա քարոզ մը խօսեցաւ և ըսաւ...

«Երախտապարտ ենք Սուլթանին՝ որ մեզի շնորհեց այս Սահմանադրութիւնը և որուն շնորհիւ կը վաճայենք այս ազաւ հայկերոյթը...»:

Բարենիշ մը՝ Բեամիլ փաշայի:

✱✱✱ Օսմ. Միութեան և Յառաջդիմութեան Գոմիքէին ժօնօսները սկսան իյնալ:

Ինչո՞ւ:

Իրենց իսկ խափային:

Ես այսչափ կ'ըսեմ:

Թող հասկցողը հասկնայ:

Անկայանա՝ սիւրի սիւնիք ազգ, անկանախանա՝ տալուց գոռունա՝ ազգ:

✱✱✱ Մարքիզիւն մեզի ինդրադիր մը կը դրկեն՝ մատուցանելու համար յոտս Համբարձում էֆ. Պոյաճեանի, անդամ Օսմ. Բառլամէնդին և Պոլսոյ ներկայացուցիչ Հընչակեան Կուսակցութեան:

Սովորութիւն չունինք մեզի եւ կամ խնդրագիրները միմեկէր ալքի ընելու:

Մենք հակառակ ենք միմեկէր ալքի սովորութեան:

Նախորդ բժիշկը՝ խնդրագիրները և գանգատները միմեկէր ալքի ընելով տապալեցաւ:

Հետեւաբար նոյնութեամբ կը հրատարակենք . . .

«Այս երկրորդ անգամն է, որ «Մագրիկ»-ը ի շայ հասարակութիւն «նր անխորժուածիւն ունեցու ժողովրդական քուրթի ամբիոնէն լը «սերու Ձեր «հետադար» փոփոխական «տիւթներու . . . «մասալները» : Ուստի երկրորդ անգամն ըլլալով կը «խնդրենք, որ այսուհետեւ թոյլ չը «տաք արիւնի քարծրանալու Ձաք «տաք լարաւ-Մեծ-նոր-խան N-Յի «թիւթիւնն ու խաւովէն հաճի աղ- «պարները» : Շնորհակալ կ'ըլլանք, «եթէ տառնց փոխարէն մեզի ու «գարկէք այնպիսի դաստիարակներ, որոնք կարող ըլլան Հնչակեան ծը- «րագիրը հասկնալու : Ներքեղք մեզ «քանու, որ մենք Վանի մէջ չենք : «Պոլսեցի գիտէ տալ հարկա հար- «կաւորաց եւ պատիւ արժանաւոր «բաց» :

(Ներ կողմէ՝ ոչինչ :

*** Ռոտտոթոյի S. Բարթոլոմէոս, Թագաւորութեան քաղաքացի լայ- տառակ մարդ մըն է եղեր :

Մարդը խօս գինով գացեր է ժաւորը ծեծելու :

Այս ծեծի պարագան զիս ամե- նելիս չի դորժացներ :

Ռոտտոթոյիները սքանչելի մար- դիկ են, սկսելով իրենց երեսփոխա- նէն :

Բայց բանի մը բարկացան մի, հաւանաբար իրենց առաջին յայտա- րարութիւնը կ'ըլլայ :

— Մենք մարդը կը ծեծենք :

Բարթոլոմէոսը Թագաւորութեան քաճանան ալ Ռոտտոթոյի էր և գացեր է, ինչ- պէս կատարեալ Ռոտտոթոյի մը, ժամկոյը ծեծելու :

Ձեռ կարծեր որ այս խօսքիս հա- մար Ռոտտոթոյիները զայրանան և վրաս գնին . . . զիս ծեծելու :

*** Առջի օր, Հալաթիա մեր Գործունէութեան խանի կայսրութեան մէջ հրդեհ ծագած էր :

Իրան առջեւ հասնելու, հան- ղիպիցայ ջրհանկիրներու, որոնք ը- սին խնդալով :

— Մո՛ւ, աչքդ լուս, տպարանդ էրէցաւ :

Հէ՛ . . .

Այստեղ փառ կարծէք գլխիս :

Հապա «գասառն», այն զի խալի «գասառն», որուն մեջ պահուած կար ամբողջ հարստութիւնս . . . :

Երկինքի կամարը իշաւ վրաս և ծածկեց զիս :

Ու վեր ելայ դողալով՝ ապագան ներկան ու անցեալը խորտակուած մարդու մը պէս :

Հա՛յն չունչ մը . . . :

Այրօղ տպարանս չէ եղեր, այլ քովնտի տուրի գործարան մը :

*** Ազգ. Երեսփոխանները՝ Իզմիրեանի տեղը դնելիք ո՛չ Պատ- րիարք մը, ոչ ալ Տեղապահ մը կա- ըննալով գտնել յուսահատած են եւ գտնէ կը փախաքին 4-5 ամիս ալ Իզմիրեանը պահել իր Պատրիարք Պոլսոյ :

Շատ աղէկ, 4-5 ամիս ալ Պատ- րիարք մնայ, բայց անկէ ետքը,

անկէ ետքը . . . ինչ ապուր պիտի ուտենք :

*** Օսմ. Խորհրդարանը մտա- դիր է Պետական Խորհուրդը ջնջել, իրր տեղորդ մարմին մը, որ գոյու- թիւն չունի եւրոպական երկիրներու մէջ :

Պետական Խորհուրդը ջնջելը՝ աղէ՛կ, բայց մէջինները ինչ պիտի ընեն, Պետական Խորհուրդի պատ- կաւելի անդամները, որոնք ո՛չ մէկ գործի ետքաւ են, իրր չիւրիւրիւր աղ. Խորհուրդին մէջ նետուած էին և հարիւրաւոր ոսկիներ կ'առնէին առանց, առանց օր մը իսկ իրենց գործին գլուխը երթալու յաճախ :

Արդեօք Պետական Խորհուրդին հետ Պետական Խորհուրդին անդամ- ներն ալ պիտի կրնան ջնջել :

Ինչ պիտի ընեն այդ մարդիկը, որոնք վարժուած էին՝ առանց բան մը ընելու, ամսական առնելու :

Ահա՛ խնդիր մը, որ շատ մտա- ծել պիտի տայ այդ Խորհուրդին ան- դամներուն, որոնք տարիներէ ի վեր ազգին կռնակէն կը կշտանալին՝ առանց ծառայութիւն մը ունենալու :

*** Մամուլի նոր կանոնագիր մը կը հանեն կոր :

Այս կանոնագիրն քով . . . Ինչմալ պէիս սակահորութիւնը ոչինչ կը մնայ և կ'երեւի թէ մօտ օրէն ախը պիտի քաշենք բռնակալութեան հին օրե- րուն :

Գտնէ հին բէթիմի մէջ 500 ոսկի պահեստի դրամ չէին պահանջեր թերթ հրատարակողէ մը :

Շա՛տ շատ թերթի արտօնութիւն չէին տար, բայց 50 ոսկի ալ կան- խիկ պահանջելու անխելքութիւնը չունէին :

Կրեւելի թէ հին բէթիմի մարդիկ աւելի խելացի էին և կը մտածէին որ թերթ հրատարակելու ձեռնարկող անձ մը չկրնար 500 ոսկի պատրաստ ունենալ գրպանը և եթէ 500 ոսկի ունենայ, պանքա կը ըմնայ, փո- խանակ լրագիր հրատարակելու :

Բայց նոր բէթիմի մարդիկ այն- չափ ալ խելք չունին և զրջի մար- դիկը միլիոնէր կը կարծեն կոր :

Հապա ո՛ր մնաց մամուլին ա- ղատութիւնը :

Եթէ հարկ ըլլայ 500 ոսկի կան- խիկ տալ թերթ հրատարակելու հա- մար, ո՛չ ոք կրնայ թերթ հրատա- րակել :

Ամէն պարագայի մէջ, խելքին մեռնիմ ես այն մարդուն որ այս գիւտը յղացեր է :

*** Սիկառ ծխողներուն աչքը լո՛յս :

Գալ շարթու տասը օր ծխալա- ճառները պոյքօթ պիտի ընեն Բէթիի դէմ և ընառ ծխախոտ չպիտի ծա- խեն :

Եթէ ասանկով Բէթիին խելքը գլուխը գայ՝ մեծ բա՛ն . . .

Բայց, տեսէ՛ք ինչ պիտի ըլլայ : Ամէն մարդ իմանալուն պէս որ ծխալաճառները տասը օր Բէթիի դէմ պոյքօթ պիտի ընեն, տասը օրուան համար պահեստի ծխախոտ պիտի գնեն մէ՛կէն :

Եւ ասանկով Բէթին բան մը կոր- սնցուցած չպիտի ըլլայ :

Այլ կորսնցնողները պիտի ըլլան նորէն . . . խելք ծխալաճառները :

*** Բերայի Հայ Երիտասարդաց մի- ութիւնը և Կլոդական Միութիւնը . . . որ սակայն վաւերացուած չէ Ազգ. Պատրիարքարանէն, իրարու շատ կը նմանին : Հաստատութեան առաջին օրէն ի վեր. Հայ Երիտասարդաց Միութիւնը կը զբաղի իսկ սրահը ունենալու հարցով. իսկ Կլոդական միութիւնն ալ կը փնտռէ լաւագոյն օդով ու առատ մէզով գինետուն մը :

Երկուքն ալ իրենց փնտռածը տակաւին չեն գտած, ո՛վ գիտէ երբ կը գտնեն :

Բայց գտնէ Կլոդականի անդամ- ները ամէն իրիկուն, ասդին անդին մէջ մէկ հատ կը խմեն, իսկ խելք Երիտասարդաց միութեան անդամ- ները ամառվճարները կ'ընեն, ու կաթիլ մը ջուր ալ չեն խմեր . . .

Աստուած շատ քաշել չի տայ . . .

*** «Գարուն»ը եկաւ . . . շնորհիւ Փալազաշեանի, աս անպիտան անձ- րեւոտ թիւթին օդերէն ետքը, որ- չա՛փ պէտք ունէինք Գարունի :

Միայն թէ այս Գարունը չի նը- մանիր մեր գիտցած Գարունին, հոն ոչ սոխակ կայ, ոչ վարդ, ոչ պու- րակ, ոչ ալ գետիւն : Հոն կայ Ե- նովք Արմէն :

*** Այստեղ կը գտնայ ու բաղդերն ալ կը փոխուին, երկու ամիս տուա՛յ Կ. Գալֆաեան Օթէլլօ կը խաղար, առջի իրիկուն Իւնիօն Պրանսէլի սրահին մէջ, «Երաքէօ»ի պաշտօն կը կատարէր. «աւաղ փառացս անցաւորի . . .» :

*** Կը խնդրուի Պ խմբագիր- ներին սիրաբանութիւն չընել «Հայ- կական երեկոյթ»ներու մէջ :

*** Կը կարծէի որ փնտռած 800 ոսկիով ազգիկը գտած ըլլալուն համար Ենովք Արմէն ա՛լ չի փայլի գրական հրապարակին վրայ. հաշիւս շատ սխալ է եղեր :

Մարդը չի գրեր եղեր անոր հա- մար որ «կը խրտչէր ազատութեան գինովութենէն հարեղէ . . .» :

Հոգիդ սիրես, Պ. Ենովք Արմէն՝ քիթերն ո՛ւս կը խնդաւ, ո՛վ ըսաւ որ մարդ գրելով կը գինովնայ. եթէ դուն գրել ըսելով . . . «տուգ ըսիս» կը հասկնաս, ասոր ըսելիք բան մը չունիմ . . . :

*** Իւնիօն Պրանսէլի սրահին մէջ լոյսերը կը մարին գրեթէ, ու ապա ճայմի կ'ըլլան ու կը վառին դարձեալ, չեմ գիտեր որ ատեն :

Ետեւէս օրիորդ մը, զոր ան- պատճառ սիրուն կ'ենթադրեմ. քո- վինին :

— Ա՛յ, մութը աղւոր էր, սանկ խորհրդաւոր էր, ինչո՛ւ համար վա- առցին . . . :

Ինչ մնաց խօսքի խառնուէի ու իրեն իրաւունք տայի, պարզելով մութին գաղտնիքներն ու հմայքը :

Ազգիկ որ չեմ ըրեր, ո՛վ գիտէ քովի ծերութիւն ֆոթոգրով կ'ընէ ինչ ենթադրութիւններ ընէր մութը սի- րելու, ուղեւորու համար. թերեւս

փառաւոր տիպ մըն ալ ուտելուս պատճառ ըլլար . . . :

*** Իւնիօն Պրանսէլի սրահին ներս մտնելու վրայ եմ. յանկարծ վրաս կը յարձակին, անանկ ձեռով մը որ եթէ Թառլա-Պաշի ըլլար ուզոյ- վէրս կը քաշէի կեանքս կամ քսակս ուղղողներու դիմաց կարծելով ինք- զինքս :

Ձէ՛, ասոնք անանկ բան չեն ուզեր. փունջ կ'ոգնեն ծախել, ու քառթս առնել. աղէ՛կ չէլալ ըլլայ. օրիորդներ՝ խոստովանեցէք որ մենք տգեղ սեռի պատկանողներս, այս տեսակ հարցերու, ազգելու, առնե- լու խնդիրներու մէջ ձեզմէ շատ ա- լելի յաջող ու ճարպիկ ենք. մենք մարդուն հոգին կ'առնենք, առանց իրեն զգացնելու . . . :

*** Պ. Արեւեան տաճկերէն սովորէր է. հիմակո հիմակ մէկ բառ մը միայն գիտէ, բայց այդ բառին ուղի ու ծուծը գիտէ, Իւնիօն Պրան- սէլի սրահին մէջ չ'երկար ժամեր փորձ ըրած ըլլալով :

Պ. Պ. Կովկասահայ դերասաններ ալ տեղերնիդ գացէք, աղէկ էք, խառ էք, բայց խնդրեմ, մեզի թո- ղէք մեր Բերայի Հայ աղւոր գեղու- հինները :

Դուք հոս մեզ պիտի «դաստիա- րակէք», թէ գեղուհիներնիս պիտի յափշտակէք. ըսէք որ գիտնանք :

*** Ասցեալ օր բանաստեղծ Շահան Նաթալին տեսայ . . . :

Աստուած ի՛հ, այս ո՛րչափ երկայ- նամազեր ունինք մեր ազգին մէջ :

Կարապետ Գալֆաեան. Ենովք Արմէն, Ենովք Շահան, Պերպէրեան որդի, Ստեփան Բարեղեան, Վահ- րամ Փափազեան . . . :

Արդեօք բոլոր երկայնամազերը մէկ . . . չե՞նք կ'ըլլան :

*** Դեռ ինչե՛ր պիտի լսենք, երկինք :

Սահանագրական երկրի մը մէջ ամէն ժողով պարտաւոր է իր խոր- հըրդակցութիւնները և որոշումները մամուլին յայտնել և հաշիւ տալ :

Բայց մեր Փաղաք. Ժողովը կ'ե- րեւի թէ բացառութիւն կը կաղմէ :

Առջի օր կը նստի կը խորհրդակ- ցի և իր տուած որոշումները մամու- լին չի յայտնէր :

Արդեօք ինչո՛ւ. կրնայինք միթէ հասկնալ :

*** Օսմ. Ազգ. խումբը տնօ- րէնութեամբ Բէշատ Բուլուան պէյի շաքաթ օր պիտի մեկնի Իզմիր, քը- սան օր մնալու համար Սրօրդինք գլխաւի մէջ :

Կովկասահայ խումբն ալ այս շաքաթ Իզմիր պիտի երթայ :

Ո՛վ Իզմիրի Հայեր, ո՛վ Իզմիրի Թուրքեր, ո՛վ Իզմիրի չամիչներ, աչքերնիդ լոյս :

Երուանդ Թօլայեանն ալ գալ շաքաթ օր պիտի երթայ Իզմիր, ուր պիտի մնայ շաքաթ մը թէ խաղա- լու և թէ . . . չամիչ ուտելու համար :

